

1870—1880



**Ե**՛ր օրովհետեւ Թուրքահայ վանառականութեան այս գործիս մէջ՝ զբաղեցանք աւելի՛ մանիֆաթութեայի բեղուն բնական և ազնիւ ճիւղով՝ մեր այն ճիւղի՛ն մէջ բաւական ատեն աշխատած ըլլալուն գլխաւոր պատճառով, նաեւ այդ ճիւղը գլխաւորապէս ամէնէն մաքուրն և ամէնէն յանձնարարելին նկատած ըլլալնուս իմաստասիրութեամբ, կուզենք քիչ մըն ալ խօսիլ պարսկական թուրքահայ մանիֆաթութեայի առեւտուրներուն վրայ:

Պարսկաստանի հետ մեծավաճառ տուրևառներու մեծ մասը տեղի կունենար ի Կ. Պոլիս՝ Վալիտէ Մեծ-Նոր և Սիւմպիւլ խաներու բուն պարսիկ վաճառականներու և պաքսիկ և յոյն յանձնակատարներու և միջնորդներու ձեռքով: Հայք 1855էն ետքը կըսկսին այս ընդարձակ ճիւղին՝ երբ ուղղակի Անգղիայի հետ ալ կըսկոին իրենց բուն վաճառական-ներածական գործառնութիւնները:

Այդ թուականէն առաջ՝ որոշ բան չենք գիտեր պարսկական լայնսիրտ վաճառականութեան այն մասին վրայ՝ որ կը կատարուէր Թուրքիայի միջոցով: Բաց ի թերեւս Քալիամաճեանց բարեբաղդ տունէն՝ ուրիշ թուրքահայ ձեռնարկուի մը չենք պատահիր պարսիկ մեծ առեւտուրներու մէջ՝ 1855էն առաջ: Թուի Յունաց եւ